

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ՆԱԽԱԿ ԿԱՍ ՈՅԻ ԲՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏԲ Է ՈՒՂՂԱՆ ԱՌ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ ԼՍԱՐԱՆ
ԳԱՀԻՐԷ

Direction du journal

NOR-OR

Caire

Չեռագրութիւն էս չեն դարձաւիր

ԱՐՏՕՆԱՏԵՐ Ժ. ՄԻՒՆԻԵ

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՔԹԻ ԵՒ ՇՈՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե Գ Ի Պ Տ Ո Ս	
Գանձիւրի համար	Տարեկան 50
» » վեցամսեայ	30
Շրջակայից »	Տարեկան 60
» » վեցամսեայ	35

ԱՐՏԱՆՉՄԱՆ ԶԱՄԱՐ	
Տարեկան	Ֆրանգ 18
Վեցամսեայ	» 10

ՌՈՒՍՈՑ ԵՒ ԿՈՎՈՍՏ ԶԱՄԱՐ	
Տարեկան	րուբլի 7
Վեցամսեայ	» 4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ե
ԵՒ ԲՂԹԱՏԱՐԻ ՇԱՍՔԸ

Թերթի վարչութեան վրայ է

ԶՈՐԵՔՇԱՔԹԻ ՀՈԿՏ. 25/7 ՆՈՅՄԲ.

ՔԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՋ

Ա. ՏԱՐԻ ԹԻԻ 44

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ ՏԱՐԻՈՅՍ ՕԳՈՍՏՈՍԻ 11-էն
ՄԿՍԵԱՎ ՎՄՐՉՈՒԹԵԱՆՍ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԿՆԻՔՆ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ-ՆԵՐԿԱՅՈՅՈՒ-
ՑԻՉ ՏԻՍՐ ՍՄԲԱՏ ՓՈՓՈՋԵԱՆԻ ՍՏՈՐ
ՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԶԸ ԿՐՈՂ «ՆՈՐ ՕՐ»-Ի
ԸՆԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՎԱՅԻՆ ԿԸ ՆԿԱՏ-
ՈՒԻՆ:

* * *

«Նոր Օր»-ի վարչութիւնը կը խնդրէ
Արտասահմանի ու կողկասի արդոյ
բաժանորդներէն որ հաճին պահան-
ջել երկաթով մը «Նոր Օր»-ի պակաս
ստացուած թիւերը, որոնք պիտի
զրկուին անմիջապէս:

Նոյնպէս կը խնդրուի «Նոր Օր»
ստացող բոլոր կողկասի հայ թեր-
թերու ու Հանդէսներու Պատ. խմբ-
բազմութիւններէն որ իրենց հրատարակու-
թիւնները փոխանակեն «Նոր Օր»-ի
հետ:

ՌՈՒՍԱՅԱՅԵՐԸ

Թիֆլիզէն գոյժերը մէկզմէկու կը
յաջորդեն. անցեալները ցաւօք լսե-
ցինք ուսական կառավարութեան
հրամանաւ՝ թիֆլիզի հայոց Բարե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Գիտութիւնը կ'երկարէ կեանքը ու գա-
նազանութիւն կուտայ անոր. ասոր հաւա-
տալու համար, սակայն, անձամբ փորձելու
է: Սխալ է բարոյական չոր-ցամաք, գծուար
կամ ձանձրացուցիչ նկատել Գիտութիւնը:
Գիտութիւններուն շատ այնքան դիւրին է
որքան հետաքրքրական: Ինչպէս որ բառա-
բանները պէտք են գրականութեան համար,
այնպէս ալ՝ գիտական գործերը, գասի՝ ցե-
ղի նկարագրութիւնները կարեոր են գիտու-
թեանց համար:

Իրաւ է թէ՛ երբեմն Գիտութիւնը հին
բանաստեղծական առասպելները կը ջնջէ,
ինչպէս, գոր օրինակ, հին Հնդկները գե-
տերուն համար կ'ըսէին թէ՛ «Խնորա» (*) իր

(*) Խնորա զէտալի մէջ երրորդութեան
միոյն ամուսն է և կը մշտնապէս մթնոլորտ:

գործական ընկերութեան փակուիլը.
ասի բաւական չէր, այսօր ալ յան-
կարձ կը լսենք թէ՛ թիֆլիզի Հրա-
տարակազմական ընկերութիւնն ալ խա-
փանուած է անպայման կերպով, ու
թերեւ վերակենդանանալու յոյս չի
կայ. այս լուրը աւելի դառն բան
զառաջինն տխուր տպաւորութեան մը
տակ կը թողու անշուշտ այն ամեն
Հայ որ սիրահար իր ազգային դրա-
կանութեան, կը պաշտէ Լսարանա-
կան ու Մասնագործական Միու-
թիւնը, և որոյ մակարդակը կուզէ միշտ
բարձր պահել:

Այո՛, անողոր վճիռ մըն է սա որ
չանձի նման կուզայ հարուածել Ռու-
սահայ գրասէրներու ոգին, որոնք
այնքան խնամեալ ու ճոխ գործեր
արտադրեցին. եթէ երբէք մեր Ռու-
սահայ եղբայրները բողոքեն այս ա-
նարդար վճիռն զէմ, ու իրենց ձայնը
անլսելի մնայ, գիտցէք որ այլևս
Ռուսահայ գրականութիւնը պիտի
մարտիրոսանայ ու քիչ ատենէն պի-
տի թաղուի, նամանաւանդ որ Ռու-
սիոյ բռնած ճամբան ցոյց կուտայ
թէ՛ Ռուսահայ թերթերն ալ կամաց
կամաց պիտի բռնադատուին ու քիչ
ժամանակի մէջ՝ Ռուսահայը թերեւ
զրկուի իր լեզուաւ գրել ու խօսելէ.
աւա՛ղ, կորուստը մեծ է:

Հրատարակչական ընկերութիւնը

բազում տարիներէ ի վեր թիֆլիզի
մէջ հիմնուած է, իր շուրջը ունենա-
լով հինգ հարիւր յիսուն երկսեռ ան-
գամներ, գրագէտ, խմբագիր, օրէնս-
գէտ, բժիշկամենքն ալ հոնմասնակցած
են. անոր միջոցաւ կը խմբագրուէին
ու կը տպագրուէին ամէն տեսակ հայ
լեզուաւ հրատարակութիւններ ու կը
ցրուէին ժողովրդեան մէջ, բազաբա-
ցիէն սկսեալ մինչև գիւղացին կը
կարդային զանոնք:

Ոչ միայն Ռուսահայ եղբայր օգ-
տակար եղած է անի, հապա նաև
արտասահմանի բովանդակ հայու-
թեան. անշուշտ չը մոռցուիր, հազիւ
երեք տարի առաջ թիֆլիզի Հրատա-
րակչական ընկերութիւնն էր որ ին-
նըստուն կտոր ընտրեալ գիրքեր նու-
րած էր Գահիրէի Հայկական Գլխ-
պին, որուն թանգարանին մէջ այսօր
յիշատակ կը մնան անոնք:

Կրնանք ըսել թէ՛ Հրատարակչա-
կան ընկերութիւնը Ռուսաստանի և
Թուրքիոյ մեր ազգային կրթութեա-
րական ընկերութեանց ամենէն նշա-
նաւորն էր. ընկերութեանց այդ նա-
հապետն այսօր եթէ թաղուի իսկ,
նորա գործերն անջնջելի պիտի մնան:

Ռուսիոյ թող մեր վերջին խօսքն
ալ ըլլայ սոյն ընկերութեան գործու-
նէութեան վրայ զազափար մը տալ,
առ ի օրինակ մեր ազգայնոց:

Առաջին անգամ քսան և ութը ան-
գամներ թիֆլիզէն և Պաղուէն միա-
նալով կը հիմնարկեն այն ընկերու-
թիւնը. այնքան շուտ կը քաջալեր-
ուի որ անգամներուն թիւը երկսեռ
ըլլալով հինգ հարիւր յիսունը կ'ան-
ցնի, մինչև իր խափանման օրը:

Ընկերութեան անգամները միմիայն
թիֆլիզէն չեն, Ռուսաստանի այլևայլ
քաղաքներէն աշխատակից անգամներ
ևս ունեցած է, թէպէտև ընկերու-
թեան կեդրոնը միշտ թիֆլիզ է ուր
տեղի կ'ունենայ տարեկան Ընդհ. Ժո-
ղովը, որի առջև հաշիւ կուտան ըն-
կերութեան վարչութիւնը երեք հո-
գիէ, և խմբագրական Մասնաժողովը
վեց հմուտ խմբագրութեան բազմա-
ցեալ. որովհետև արդէն ընկերութեան
նպատակը՝ գիրքեր և հեղինակութիւն-
ներ յօրինել և կամ թարգմանել ու
զանոնք ժողովրդեան մէջ ցրուել է:
Ընկերութեան 1898 տարուայ հաշուե-
կչիւրը աչքէ անցուցինք, մէկ տար-
ուան մէջ 80Յ6 թուպի և 39 կ. մուտք
ունեցած է՝ որուն երեք հազար թուպ-
լին անգամավճարներէ, երկու հազար
թուպլին գրքերի վաճառումէ, հինգ
հարիւր թուպլին երեկոյթներէ, հա-
զար թուպլին ալ նուէրներէ զոյացած
է և հազար թուպլին ալ ապառիկէ է:
Այս՝ այսպիսի արդիւնտեր ընկե-

րերն են. իր երգեհոնը գրոտուսն է, ու
զմբէթը՝ երկինքը»:

Յիսիկն ու Թիմոն մէջ բան մը չենք
կրնար տեսնել մենք. ու կը կոխտուր
կ'անցնինք. բայց ատենց մէջն տեսք Գի-
տութիւնը ինչեր երևան կը հանէ: Այդ
մեր իսկ կոխտած ցեղը՝ կաւի, աւազի,
ունջի ու ջրի զանգուածն է: Չատէ՛ աւա-
զը, — թող հիւլէները իրենց բնութեան հա-
մեմատ սեղաւորուին — ինչպէս կ'ըսէ Ռուս-
ըլն, ու կ'ունենաս արեակն: Չատէ՛ կաւը,
ու կ'ըլլայ ան ճերմակ հող մը, ուրիկ ա-
մենաբնտիւր ապարանջաններ կը շինուին.
կամ եթէ աւելի մաքուրի գնո, շափիլայ
կ'ըլլայ: Հանէ՛ ունջը, և եթէ պէտք եղա-
ծին պէս կատարուին պէտք եղած գործու-
թիւնները՝ կ'ըլլայ արամանց: Վերջապէս,
ջուրն ալ զտուելով ու թորուելով, կ'ըլլայ
ցօղի կայակ մը, կամ բիրեղացեալ աստղ
մը: կամ, նոյնպէս, ուզես ցած լճի մը մէջ
անոր յատակը գտնուած ցեղը կը տեսնես,
ուզես անոր մէջ երեցած երկնից պատկերը

ուսուսնասիրած եմ գլխաւորաբար. ամեն
մարդ իր սիրածովը կը հետաքրքրուի. բայց
միջ կրնայ ուրանալ Աստղագիտութեան ճըշ-
մարտութիւններն ալ:

Բնական Պատմութեան ուսումը ընտրողի
կարգ անցեր է գծադրաբար. այդ բանը
հազարաւոր տարիներէ ի վեր գոյութիւն
ունի անգղիացոց մէջ: Բնագէտ մը գիտ-
նալու է թէ Գիտութիւնը լոկ օձերու ու
մողէզներու հաւաքածոյն ընկել մէջ չկա-
յանար: Շատեր ալ, սակայն, Բնութեան
անպիտան «խոսն ու որդը» կը ճանչնան
միայն. այսինքն պատիկ տղաց պէս թաշու-
ններ կը սիրեն՝ անոնց քար նետելով: Բայց
հետզհետէ կրնանք յուսալ թէ գիտութիւնը
երթալով մարդոց աւելի սիրելի պիտի դառ-
նայ:

«Գիտութիւնը կը կանչէ զմեզ, կ'ըսէ Հ.
Սմիթն, զէպ ի այն մայր եկեղեցին՝ որ
մեր զարմանքին չափ անեղբ է. արևն ու
լուսինը կը մատակարարեն անոր անշէջ
կանթերնը. հովերն ու աշիւները իր խմբ-

բուժիչն մը իր կամքէն անկախաբար՝ միապետական հրամանաւ մը կը ջընջուի յաւիտեանս, ի մեծ ցաւ ամէն գրասէր հայու:

Ինչպէս որ շեշտած ենք լսարանի առթիւ մեր բրած աստեղծութեան մէջ զոր յաջորդ թուով պիտի տեսնէք, նոյնը կը կրկնենք, օգտուինք առիթէն այսպիսի երկրի մը մէջ ուր ազգի մը գրականութիւնը ազատ կ'ապրի ու անկախ է:

Ուրախ ենք աւետելու մեր արգոյ ընթերցողաց թէ «Փարոս»-ի նախկին Տնօրէն Տ. Յ. Արիխար ստանձնեց այստեղեւն աշխատակցի խմբագրութեան՝ իր սրամիտ յողովմանով որոնց առաջինը պիտի հրատարակուի մեր յառաջիկայ շաբաթ օրուան թիւով: Տ. Արիխար այս կերպով ոչ միայն «Նոր-Օր»-ի հարստացումը իր բազմաթիւ թարեկամներու հաճելի եղած պիտի ըլլայ:

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Ն. Վ. Գոյոս փաշա Նուպար երէկ երեքշաբթի Եզրպոստ վերադարձաւ «Մէսաժըրի Մարիթիմ» շոգենավային ընկերութեան նաւով: ՉՄԻՌՆԻՌՈՅ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ ՊԱՐՏԻԸ

«Արեւիկան Մամուլ»-էն կը տեղեկանանք թէ՛

«Ազգային արկղն իր արդի եկամտաներով իւր պիտանէն հաւասարակշռելու անհնարութեան մէջ է, և հետզհետէ պիտի ունենայ յոռեզոյն վիճակ:

«Ասոր պատճառներն են.

«Նախկալուածական յետեւաւարաց մեծ գումար մը, որոյ մասին կառավարութեան և Ազգային վարչութեան մէջ բերանացի և գրաւոր բանակցութիւնք այն աստիճանի հասած են, մինչ զի կառավարութիւնն ազգային ամենակարեւոր կալուածներէն 7 կը տարին ցուցակը զրկելով յայտարար-

թող զայդ, գեղեցկութիւնն ու հմայքն ալնոյն են. կամ եթէ չեն, մարդասիրութիւնը կը պահանջէ որ ըլլան: Նաստիթ իր գեղեցիկ ինքնակենսագրութեան մէջ կը պատմէ թէ՛ «յանկարծակիի եկայ, երբ հասկցայ որ իմ բարեկամներէս մէկուն աչքը՝ որ այնքան գեղեցիկ կը կարծէի ապակեայ էր»:

Չեմ ըսեր թէ միմիայն գիտութիւնը մեր պարագայ ժամերն օգտակար և հաճելի կերպով կ'անցնէ: Ընդհակառակն, կեանքի մէջ, գիտական մարզանքներու կարեւորութիւնը կարելի չէ որոնալ:

«Գիտութիւնը» ըսաւ 1864-ի Արքայական Յանձնախումբը, կը զօրացնէ ու կը զարգացնէ ողջակի խորհչու այն կարողութիւնը, զոր շատերու մէջ յատեան մարած կը մնայ. երկասարգներուն՝ պատճառի և արդիւնքի շարքը դժեղ կը վարժեցնէ. կ'ընտանեցնէ զանոնք այնպիսի բանավարութեան մը հետ՝ որ կը հետաքրքրէ զերենք, և զոր շատով կ'ընան ըմբոսել. ու թերևս ամենապարզ գործնան է՝ այն անտար-

բած է որ եթէ ընդհուպ այս զիջուած պարագերն չվճարուին, ըստ օրինի ի վաճառ հանելով զանոնք՝ Տէրութեան պահանջները պիտի դանձէ:

«Երկրորդ, ծփուն պարտքեր (վարժարանի և Առաջնորդարանի յետեւալ ամաթոշակներ, ալիւրավաճառի, մրտավաճառի, գեղազործի ևն. ի պարտքեր): Ասոնց և կալուածական պարտուց գումարը կը հասնի 2000 ոսկիի»:

Այս պարտքը հաստուցանելու համար 3000 ոսկույ փոխառութիւն մը պիտի ընէ տեղւոյն Ելիմոսից բարերարն պատ. Յանձնաժողովը:

—Նպաստից Յանձնաժողովոյ որոշմամբ Հայաստանի այլևայլ քաղաքներն ու զիւզերը դպրոցներ թէ բացուեր են և թէ պիտի բացուին:

—Խորհրդէն Հոկտ. 31-7 թուակալու հասած նամակէ մը հետեւալը կը քաղենք:

«Ասիէ առաջ Սուլթանի կառավարութիւնը գաւառներու մէջ պատահած դէպքերուն առթիւ ժողովրդին ժամանակամիջոց տուած էր տուրքերն ին վճարելու համար. անցեալները քանակաւ մը եթեանասուն հինգ զրուշ գանձելու համար գիւղիս բնակիչներէն Գրիգոր Պըրլեանին կ'երթայ ու խտուր կը պահանջէ որ տուրքը վճարէ, և երբ չի տայ սպառնալիք ըրեր է անմիջապէս զինքն սպաննել, որուն վրայ Գրիգոր անձը ազատելու համար ունեցած ոչխարները 75 զըշի տեղ ձգեր է»:

ՆՏԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Կիրակէ Նոյ. 4, կէս օրէ յետոյ ժամը 4ին տեղի ունեցաւ մեծ շուքով նշանախօսութեան արարողութիւնը համակրելի Տիար Ապահ Պետրոսեանի ընդ Օր. Մարի Եագուպեանի, ի ներկայութեան խուան բաղմութեան բարեկամաց և ազգականաց, որոց մէջ կը գտնուէին նաև Տ. և Տիգրան Յակոբեան, Տիարը Գ. Ասատուբեան, Յ. Ասատուբեան, Եւառը Շիշմանեան ևն. մեր անկեղծ խնդակցութիւնները:

Ուրախութեամբ կը լսենք թէ՛ Տիար Թ. Փասուլիանեան կը պատրաստուի ներկայացնել, ամառոյ 23էն սկսեալ մինչև Դեկտեմբերի վերջ հետեւալ ընտիր թատերախաղերը:

Երբութեան որ կէս-արթուն մարերու մտութիւնն է, և որ վերջուշխեան ձիգի մը պէս մեքենական չեղող ամեն բանէ կը բաշտի:

Նոյնպէս, երբ գիտութեան մեծութիւնը աչքը առնէ ունենանք, եթէ նախնական ժամանակները կամ միջոցի անհոնութիւնը աչքերուս առնէ բերնը, պիտի տեսնենք որ մեր մանր մեծեր ներգութիւններն ու վըշտերը ոչինչ են ինքնին: «Ո՞ր գեղեցիկ արարածներ, կ'ըսէ Հիլըս, աստղերուն վրայ խօսելու տեսն, ձեր զօրութիւնը՝ դմեզ մեր պղտիկ մոլորակին ծովերու վրայէն առաջ նորոգելուն մէջ չէ. այլ զմեզ մեր խտոված մարերուն պղտոր ջրերէն դուրս հանելուն մէջ»:

Գիտութիւնը կը մարդէ ու կ'ազնուացնէ նաև կրօնը. եթէ բոլորովին չ'մարդեց ան, կ'ոյր աւերաբոյսալուծութիւնները, կ'ախարհութեան ու վճակութեան ընծայուած ամօթալի հաւատը: Քրիստոնէութիւնը դառնացնող կրօնական աններդութիւնը, զա-

ՍՈՆԵՐՈՒԹՅ ԿՈՅՍ Ողբ. հանրածանօթ, Թովմ. Թէրզեանի. Հայերէն լեզուաւ:

ՍԻՊԵՐԻԱՅԻ ԿՍԼԱՆԱՒՈՐՆԵՐԸ Թատր. 3 արար, թատրման. Ռուսերէնէ. Տաճկերէն լեզուաւ:

ԱՆՄԵՂ ՉՈՀԵՐ Աղբ. սղբ, 5 արար. Հայերէն լեզուաւ:

ԱԵԻՈՆԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԸ Անուանի թատերախաղը, 6 արար. Տաճկերէն լեզուաւ. Թ. ՅԱՍՈՒԼԻՍՏԵԱՆ

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Ն. Բ. Խալիբ մեծազին եզրպոստական զանազան հնութիւններ զրկած է Լեւոն Բ. Պապին, վերջինս շնորհակալութեան նամակ մը զրկած է Ն. Բորչրոյթի հան:

Վատիկանի թանգարանը զրուած են այդ նուէրները:

—Կ'ըսուի թէ Ղազի Մուլթար փաշայի երկրորդ քարտուղար՝ Մուհամմէտ Կէյ, այս անգամ Եզրպոստ ճամբորդելուն՝ Տամատ Մահմուտ փաշայի սունը պիտի լինէ: Հարկ չկայ ըսելու թէ Սուլթանին պատուիրակն է Մուհամմէտ Կէյ:

ՅԵՒԹԱՌ Երէկուան հասած հետազոյի համեմատ, Աղբոսաղբիոյ թուամէլէի ընկերութեան մասկիթ վարիչ Պ. Յիլիփառ երկու տարի բանտարկութեան զատապարտուած է:

ՏԱՌՈՒՆԱԿ ԿՏԱԿ ՄԸ

Ինչպէս անցեալ թուով ծանուցած էինք, Սաղաթէլ բէկ իւզըրաշեան անուն Ռուսաստանը 1849ին իր կենդանութեան ժամանակ տարօրինակ կը տակ մը ըրեր է. 400 ըրուպի դրեր է Մոսկուայի՝ և 166 անգղ. ոսկի Լոնտոնի պանզան հարիւրին 4 տոկոսով. պայմանաւ որ այդ կտակը զօրծաղբելի պիտի ըլլայ 260 տարի վերջը. ոչ ոք իրաւունք չը պիտի ունենայ

նոնք մարերու նպաստից գոնէ: Ու արդէն այդ ալ մեծ ծառայութիւն մըն է, զոր գիտութիւնը մատուցած է կրօնընդհանրութեան ձրէմանթը կ'ըսէ թէ՛ «Գիտունները, և ոչ թէ կղերականութիւնն միայն, կրօնքի պաշտօնեաներ են»:

Գիտութիւնը նոյնպէս ուրիշ շատ բաներ ըրած է, բայց մենք ատենք ամենը կը մտնանք, որովհետև մեր առօրեայ կեանքին մէջ հասարակ բաներ զարծեր են այլևս: Քիչ ին միթէ, օրինակի համար, հետազոյին ընծայած բարիքները:

Ազգի մ'ապագայ երջանկութիւնն ու յաջողութիւնն ալ՝ գիտութեան կախեալ է: «Անդրկան», կ'ըսէ Փիլէթրու օԷ Լայժի հեղինակը, «հիմա 35,000,000էն աւելի ժողովուրդ ունի, և որ հետզհետէ բազմանալու վրայ է, տարեկան 130,000,000 անգղ. ոսկիի ուսուտ կը ներածէ. այս գումարը, բնականաբար, իր արտադրած ապրանքներէն կ'ստանայ. բայց եթէ միշտ այդ ընթացքով շարունակ բազմանալ 30 տարիէն կը

այդ ժամանակամիջոցին մէջ զրամագրուելին և կամ տոկոսին ձեռք գրայցընել. 260 տարին անցնելէ վերջը, էջմիածնայ Ս. կաթողիկոսը՝ Հայոց պատրիարքներու կողմէ զրկուած պատուիրակութեանց ներկայութեան ժողով պիտի գումարէ, ու գրամը պանզաներէն աւանելով կտակը պիտի զօրծաղբէ: Վերջապէս զրամագրուելին տակուն է գործը տեսնողը. ահաւասիկ կտակին յօդուածները զորս կարտատուները իբր տարօրինակ հընութիւն մը:

Առաջին յողուած.—Վերոյիշեալ 260 ամեայ ժամանակամիջոցն անցնելուց յետոյ գիտականները հաւաքուած են ամենայն հասց կաթողիկոսի մօտ և խորհուրդ են կազմում նրա նախագահութեամբ: Խորհրդի անգամներէց մէկը պէտք է լինի նաև իմ եզրայինը Յարութիւն-բէկ և Կարապետ-բէկ իւզըրաշեանները սերնդից աւագագոյնը: Խորհրդի անգամները կ'ստարին մի անգամ ստանալով բանկերից իմ գրամագրի տակունները՝ ձեռնարկելու են հետեւալ շէքերի կառուցման:

1) Համալսարան 200 ուսանողի համար, զրազարանով հիւանդանոցով, կեկեղեցով, բազանիքով և մեծ այգով: Գրա համար նըշանակուած են 375,000 ըրուպի:

2) Գոյրոց հայ կեկեղեցու միսոնարներ պատրաստելու համար: Գոյրոցը պէտք է պարունակի 50 միսրան և պիտի ունենայ իւր սեպհական կեկեղեցին, հիւանդանոցը, զրազարանը և այգին: Գրա համար նշանակուած են 200,000 ըրուպի:

3) Տղարան զանազան լեզուների տաւերով: Տղարանը պէտք է գտնուի արքունական գոյրոցների տեղի մօտ: Տղարանի շէքը կառուցանելու, մեքենաներ, առտեր և այն գնելու համար նշանակուած են 100,000 ըրուպի:

4) Վեց ուսումնարան, որոնցից երեքը պէտք է լինի տղայոց, իսկ մնացած երեքը աղջկանց համար: Այդ ուսումնարաններից խրաքանչիւրը պէտք է պարունակի 100 աշակերտող-Նրանցից խրաքանչիւրին կից պէտք է գտնուի փոքրիկ զրազարան, պարտէզ, փոքրիկ կեկեղեցի, հիւանդանոց և բազանիք: Այդ բոլոր ուսումնարանների և նրանց կից շէքերի համար նշանակուած են 400,000 ըրուպի:

5) Եթով աղքատանոց, որոնցից խրա-

կրկնապատիկ (և թրանսլալի պատերազմ տարբերութիւն մը պիտի չընէ բնականաբար) և անուաղն տարեկան 400,000,000 անգղ. ոսկույ ուսուտ հարկ պիտի ըլլայ. ինչպէս պիտի վճարէ այն ժամանակ այս գումարը: Երբեք կերպ կայ. կամ կեցնել այս բնական ընթացքը՝ չ'թողուլ որ բազմանան, ինչ որ ներգութիւն ու խայտառակութիւն կը նշանակէ. կամ թողուլ որ բազմանան, պարզապէս թշուառութեան ու աղքատութեան մէջ սպրկու համար. և կամ, զարգացնել, ընդարձակել գիտական կըթութիւնները-Գիտութիւնն է: Սա՛ հաւանականաբար կրնայ և պիտի պահէ ժողովուրդն ու ազգը՝ երջանիկ ու զօրաւոր:

Մարդը, սակայն, վեպի գիտութիւնը շատ ճամբայ ունի անկեղք. նշանաւոր առած մը կ'ըսէ թէ՛ «ատեն պիտի գայ որ հողագործին լածը արդի ամենամաստուն փիլիսոփայէն շատ աւելի տեղեկութիւն պիտի ունենայ գիտութեանց վրայ»:

(Շարունակելի)

քանչևրը պիտի պարունակի 100 հարկ: Այդ շինքերի համար նշանակում եմ 480,000 ռ.:

6) Խորհրդի ընտանեկան և գրադրի ու ճիկների, նմանապես և գրական պարագաների և գրապրոթիան համար նշանակում եմ 10,000 ռ.:

7) Խորհրդի անդամների ճանապարհաձայնի համար, որ որոշում է կաթողիկոսն ու սինոդը. նշանակում եմ 33,000 ռ.:

8) Գիտնականների (խորհրդի անդամներ) երկամսյա ոտնիկ համար նշանակում եմ 66,000 ռ.:

9) Խորհրդի այն անդամների համար, որոնցից նշանակում են տեղ որոշվող վերջին շինքերի համար, ճանապարհաձայնք եմ նշանակում 13,000 ռ.:

10) Ուսումնարանները, եկեղեցիները, հիւանդանոցները և տպարանը շինողներին (ճարտարապետներին) ի վարձատրություն 30,000 ռ.:

11) Ուսումնարանների և աղքատանոցների հիմքն օրհնելու համար—13,000 ռ.:

12) Յիշատակ ընդհանուր կառուցանելուց յետոյ թեմական առաջնորդները պատարագ են մատուցանում իմ մեղաւոր հոգու համար և այդ օրերը կերակրում են 1,0001 աղքատի: Այդ ծախքերի համար նշանակում եմ 30,000 ռ.:

13) Երեք ուսումնարանների և աղքատների հիմքերն օրհնելու համար ամենայն հայտ կաթողիկոսն ինքն անձամբ պատարագ է մատուցանում, աղօթք անում իմ մեղաւոր հոգու համար և հոգեհանգիստ կատարում: Իւր աշխատանքների համար նորին սրբութիւնն ստանում է 4 հարար բուրի. միս ծախքերի համար նշանակում եմ նըմանապես 4 հարար ռ.:

14) Ուսումնարանները և տպարանը կառուցանելուց յետոյ կաթողիկոսը պատարագ է մատուցանում իմ մեղաւոր հոգու համար և կերակրում է 1,001 աղքատի: Այդ օրը վարձատրութիւն են ստանում կաթողիկոսը 4 հարար ռ., էջմիածնի վանքի միարանները 4 հարար ռ. և սինոդը 4 հարար ռուբլի. չքաւորներին բաժանում է 2 հարար ռ., միս ծախքերի համար 6 հարար ռ., ընդամենը 20 հարար ռ.:

15) Իմ եղբայրների ցեղից նշանակուած խորհրդի անդամները տարեկան ոտնիկ են ստանում 10 հարար ռ.:

16) Թիֆլիսի քաղաքային աղքատանոցի օգտին 30 հարար ռ.:

17) Հայաստանի առաջին լուսաւորիչների՝ Թադևոսի և Բարդուղիմէոսի վանքերը նորոգելու համար նշանակում եմ 50 հարար ռ.:

18) Համալսարանի մուտքի առաջ սուրբ վարդապետի և Մեսրոպ ու Սահակ հայրապետների արձան կանգնեցնելու համար 50 հարար ռ.:

19) Ի դէպս, եթէ այն ժամանակ գոյութիւն կունենան իմ եղբայրների՝ Յարութիւն-բէկի և Կարապետ-բէկի ժառանգները, նըրանց տալ 200 հարար ռ.:

20) Եթէ իմ հօրեղբոր որդոց՝ Յովսէփ-բէկ և Միքայէլ-բէկ Շահ-Նազարեանների ժառանգներն այն ժամանակ գոյութիւն ունենան և կըպատկանեն հայոց ազգին և կըզուանեն հայ-լուսաւորչական կրօնը, նըրանց տալ 100 հարար ռ.:

21) Էջմիածնի, Երուսաղէմի և Գանձասարի վանքերի նորոգութեան համար նշանակում եմ (խրաքանչիւրին 30 հարար ռ.) 90 հարար ռ.:

22) Վենայի միսթարեան միարանութիւնն երկու տարուայ ընթացքում ստանում է 20 հարար ռ.:

23) Նոյն երկու տարուայ ընթացքում Մոսկուայի որբանոցն ստանում է 20 հարար ռ.:

25) Լոնդոնի որբանոցը—20 հարար ռ.:

25) Զմիւռնիայի ուսումնարանները—20 հարար ռ.:

Վերջինչեալ բոլոր շինքերը պէտք է վերջանան երկու տարուայ ընթացքում, այն է 2111 թուականին: Գումարների մնացորդը թողնում եմ խորհրդի հայեցողութեանը:

Կ. ՊՈԼՍՈՅ ԼՈՒՐԵՐ

(ԹՂՔԱՍՅՈՒԹԻՒՆ)

Վերջերս Սուլթանը տարօրինակ հըրաման մը ըրած էր Թուրքիոյ մէջ. իմամ մը ժողովուրդը մինևրէէն աղօթքի կոչած ատեն, ժողովուրդէն ամէն անհատ մահմետական, քրիստոնեայ, հաւասարապէս երբ սրճարան մը կամ հասարակայ տեղ մը կը գտնուի ուէ խաղալ և կամ ըմպելիքով զբաղած, պէտք է որ անմիջապէս խաղը և կամ ըմպելիքը ձգէ, ու առ ի յարգանս լուսթիւն պահէ մինչև եզակնին վերջը:

Անցեալները քրիստոնեայ մը որ յոյն ըլլալ կը կարծուի, երբ իմամ մը կը սկսի էջանի, փոխանակ խաղը ձգելու, բարձրաձայն աղմուկ կը հանէ, այդ միջոցին ոստիկան մը կ'ընդմիջէ ու վէճ մը կը ծագի ոստիկանին ու կարծեցեալին միջև, որուն վրայ սոյն վերջինը կը լսնտարկուի:

Տեղուայ Պարսիկ գաղթականութիւնը խորապէս յուզուած է Սուլթանի կողմէն ճահին եղած վատ ընդունելութեան համար. առաջուց համաձայնուած էր որ ճահը ուղղակի Օրթաքեօյն պալատին առջև պիտի իջնէր զինքը առաջնորդող «Իզլէտտին» շոգեհանէն, ուր պիտի դիմաւորէին Ն. Վ. Սուլթանին երկու տղաքը, և մեծ հանդէսով ճահը պիտի առաջնորդուէր ուղղակի Երւրդի պալատը. ատենց և ոչ մէկը դործադրուեցաւ, ընդ հակառակը ճահը Միջագիւղի աղտոտնաւահանգիստը ելաւ ուրկէ Երւրդի պալատէն ետևի փողոցներէն առաջնորդուեցաւ Պալատ, ուր Սուլթանը ներսի դրան առջև զինքը զիմաւորեց:

Իւրոյի շրջանակին մէջ մեծ աղմուկ հանց Տանըշ էֆէնտի Պոլիէն փախչիլը Տանըշ էֆէնտի «Տուլունը ումուս միյէրի» ակնաւոր պաշտօնեաներէն մէկն է. կառավարութիւնը իբր սճարագործ՝ եղեռնագատ ատենին յանձնեց գործը, և Տանըշ էֆէնտի եթէ մինչև տասը օր չի վերադառնայ իր սենեցածը չունեցածը պիտի գրաւուի կառավարութեան կողմէն:

Տէրութեան նախարարութեանց պաշտօնէից մեծ մասը կ'սկսածի տակ են. ատենց իրարու քով ժողովուրդ և կամ խորհրդակցիլը անկարելի դարձած է:

Պալատական բարձրատիճան պաշտօնեաներու միջև, Երւրդի պալատին մէջ մեծ վէճ մը ծագած է, և կը վախճուի որ մեծ շարժում մը տեղի կ'ունենայ հոն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԻՒՄ

—Պէրլ. Թախալաթի, գերմաներէն լրագրին կը հաղորդեն թէ՝ Արտասահմանի մէջ գտնուած ժեօն քիւրֆերու պարագրուներն Սուլթանին հարցուցեր են, թէ ապահովութեան ինչ երաշխաւորութիւններ կը տրուին իրենց, եթէ Հայերնիք վերադառնան, և կ'ունան յուսով որ յարգանքս գըրաւուած ինչքերը իրենց կը վերադարձուին: Կ'ըսեն թէ Սուլթանի փեսան՝ Մահմուտ փաշան ալ մէջերնին է. այն Մահմուտ փաշան, որ վերջերս «ի ձայն փողոյ» Սուլթանի և անոր ուէժիմի դէմ կ'յարձակէր:

Սուլթանն ալ տրամադիր է եղել, եթէ միայն Մահմուտ փաշան վերագառնայ, ամենքին ներելու:

—Պոլսէն «Թայմիլ»-ին կը գրեն թէ՝ Գերմանիոյ թագաւորուանդը Պաղեստին պիտի այցելէ:

Ատոր համար Գուրը Պերլիի իր գետնանին յանձնարարած է որպէս զի Գերման կառավարութեան հաղորդէ որ, եթէ Պաղեստինի ընտելիները հակադերմանական ցոյցեր ընեն, ինք պատասխանատու չէ:

ՅՐԱՆՍՍ

Յրանսայի հանդուցեալ նախկին նախագահ՝ Գարնոյի յիշատակին Լիոնի մէջ կանգնած արձանին համար Ռուսիոյ Չարը իւր համակրութիւնը յայտնած է Պ. Լուպէի, Յրանսայի արդի նախագահին: Չարը ասով ամբաստանուած էր կողմէն Յրանսոս այն բարեկամական կապերը որոնք Գարնոսի օրով սկսած էին ազգէն սերտ կերպարանք մ'առնուլ:

ՅՐԱՆՍՍՅԻ ԵՒ ԱՆԳՂԻԱՅԻ ԳՈՐԾԱԻՈՐՆԵՐԸ

Երէկ Բարիդի Աշխատութեան Սակարայի մէջ տեղի ունեցաւ հետաքրքիր արարողութիւն մը: Անգլիոյ գործաւորները որոնք կը փախուքին միջազգային խաղաղութիւնը պահպանել և կը փախաքին որ ըսու պատերազմ տեղի չ'ունենայ Յրանսայի և Անգլիոյ միջև, պատուիրակութիւն մը զրկած էին Յրանսայի գործաւորներուն որոնք մի և նոյն նպատակին կը ծառայեն:

Սրահը զարդարուած էր գոյնզգոյն դըրօշներով, ժամը մօտ երկուքին Անգլիացիք հասան որոյ միացեր էին նաև բազմաթիւ գերմանացիներ: Պատուիրակներու ներս մտած պահուն բազմութիւնը որ խուսուած էր սրահին մէջ և ստեղ ձգելու տեղ չէր մնացեր, սկսան էնթուրնախօսուալ (միջազգային) կոչուած յայտնի և ժողովրդականացած երգը երգել: Յետոյ ասեանը բայուելով բազմաթիւ ճառասուներ ամբիոն բարձրացան և ամէնքն ալ խօսեցան — ընտանաբար զանազան ոճով ձևով լեզուով — միջազգայնութեան մասին: Որպէսզի ամենայն ինչ խաղաղութեանը անցնի, մէն մի ճառասուս միայն 10 վայրկեան ունէր իւր բոլոր ընդլինքները ըսելու: Աւելցնենք որ անգլիացի պատուիրակները կը ներկայացնէին 1,600,000 գործաւորներ, որոնք անցեալ տարի Լոնտոնի մէջ ընդհանուր համաժողով մը ունեցած էին:

ՇՆՈՐՀՔԱՆ—ՄԿՐՏԻՉՅԱՆ ԲՈՆԱԿՈՒՆ

Վարչութիւնն անկողնակալ ոգով հրատարակեց Տ. Շնորհքեանի «Աղբըսանդրի» գործերուն ճշմարտութիւնները» ինչպէս նաև Տ. Մկրտիչեանի հերքողական պատասխանը. բայց նըկատելով որ հետզհետէ, այլէն ու ձախէն գրութիւններ կը զրկուին խրատագրութեան, որոնց հրատարակուիլը հեռի ուէ կերպով լուսաբանելէ ճըշմարտութիւնը, ընդհակառակը աւելի կը խճողէ խնդիրը, վարչութիւնն որոշեց մի անգամ ընդ միշտ փակել «Նոր Օր»-ի սիւնակներն:

Որովհետև ատենը այլևս հրատարակային անօգոս վէճի մը կերպարանքը կ'առնուն, որոց հրատարակութեանը «Նոր-Օր»-ի սիւնակները տրամադրելի ըլլալէ կը դադրին:

«Նոր-Օր»-ի ծրագիրը առաջին թիւով արդէն հրատարակուեցաւ և պէտք է որ նոյնութեամբ գործադրուի. հոն կ'ըսուի թէ Նոր-Օր կը մերժէ վայրարանութիւնները, կոպտութիւնը յարձակումները ուէ ընկերութեան, իշխանութեան, հաստատութեան կամ նոյն իսկ անհատի մը դէմ: Կը հիւրընկալէ ամէն յօդուած որ կը քըննադատէ ազգային շարժումները ու ի վեր կը հանէ ազգային գործոց ճշմարտութիւնը, թողլով առ որ անկէ ամբաստանեալ կէտերը ջախջախելու հերքել փաստերով և ոչ թէ վայրարանութիւններով:

Թերթի մը իսկական սեռնորդ որքան լուրջ ըլլայ, իր ապագան ալ այնքան ապահովուած կ'ըլլայ. ահա՛ այս նկատումներով և մեր ծրագրի հաւատարիմ մնալու ուխտով է որ Պ. Մըկրտիչեանի հերքումէն վերջը սոյն խընդրոյն նկատմամբ խրատագրութեան զըրկուած գրութիւններն չը պիտի կըրնանք հրատարակել, ցորչափ մեր հասկըցածին վրայ լոյս սփռող նոր բան մը չը տեսնենք հոն:

Այդ գրութիւնները հրատարակելով ոչ միայն մեր ծրագրի ուղղութեան չեղած, հապա նաև արդէն ցաւալի վէճի մը բողբոջումը և անօգուտ երկարաձգումը դիւրացուցած պիտի ըլլանք, որն որ մեր բաղձանքին հակառակ է:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՅԿԱԿՍՆ ՏՊԱՐԱՆԷՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ

ԲՆԱՇԽԱՐՀԻ ԲԱՍԱՐԱՆԻ ԵՐԿՐՈՐԳ քանութիւններն պրակն, որ կը բաղկանայ 160—320 երկուսն էջերէ և զարդարուած է 91 դեղեցկատիպ պատկերներով:

Բնաշխարհիկ Բաւարուսի մէջ կը նկարագրուին:

Ա. —Մեր բոլոր նահանգները, գաւառները, քաղաքները, աւանները, գիւղերը, լիւնները, դաշտերը, լճերը, վանքերը, և այլ նշանաւոր և յիշատակաց արժանաւոր տեղուանք: Բ. —Յատուկ խնամքով ազգային աշխարհագրական պատմութիւնն, ինչպէս նաև հնախօսութիւնն, իրենց բաժինն ունին:

գործոյ մէջ, և իւրաքանչիւր նահանգաց, գաւառաց և քաղաքաց բերոց վրայ լիովին տեղեկութիւն կը տրուի: Գ. Մեր գաղթալայրերն ևս կը մնան Բառաբանի մէջ, և ըստ կարելոյն երկրագործոյ վրայ գանձող այն ամէն քաղաքներն, յորս բնակած և յիշատակ մը թողած է հայտութիւնն, և կամ ատկաին կը բնակի: Դ. Չանազան ձեռագրաց և շինուածոց յիշատակարանաց մէջ յիշած աշխարհագրական անուններէն այն ամէնը՝ որ կրնան հետաքրքրական ըլլալ՝ կը շնանք գուր չմտող: Ե. Եր յիշատակներ նաև այն ամէն պլանցաքանակ գիւղերն, յորս կը գրուանին ինչ ինչ յիշատակարանք և բեկորք հայրենի հնութեանց: Զ. Նըշանաւոր անուանց շատերու ստուգարանութիւնն ալ յառաջ կը բերենք, և ոմանց գիւմաց ըստ տեղոյն կը նըշանակենք օտար ազգաց անուանակոչութիւնն՝ իրենց յատուկ գրերով: Է. Ի ստորեւ այն անուններուն, որոնց վրայ աւելի ընդարձակօրէն գրած են սրիչ ազգային և օտարազգի հեղինակներ, և կամ ստած են օգտակար տեղեկութիւններ, առանձին գրքերու կամ թերթերու մէջ, կը նշանակենք համաօտարութեամբ նոյն գիրքն կամ թերթն և զլուին կամ էջն:

Բնաշխարհիկ Բառարանի այս երկրորդ պրակն հրատարակ հանած ժամանակ կը փութանք յայնանքու մեր խորին շնորհակալութիւնները այն ամենայն ազգային բանասէրներու, լրագրաց և հանդէսներու յարգելի խըմբազդիրներուն՝ որոնք բարեյօժար կամ քիտթաղին թէ՛ առանձին նամակներով խրատուել զմեզ և թէ՛ սպառողութեամբ գրախօսակամներ կամ ազգեր հրատարակել:

Արդհետեւ շատեր փափաքեցան գիտնալ թէ քանի՛ պրակաց մէջ պիտի ամփոփուի ամբողջ Բառարանս, պիտիք գոհացնելու համար միջին հաշուով մը միայն կրնանք ըսել, թէ կարելի է լինի 10էն 12 քանթիթերթեան պրակ:

Բնաշխարհիկ Բառարանի նորոտար պատկերաց լուսանկարներ ձեռք բերելու համար կը հանդիպինք բազմազանի գծաւորութեանց, որով երբեմն կ'ստիպուինք զանց ընել անուանի քաղաքի մը կամ գիւղի, եկեղեցւոյ մը կամ վանքի պատկերն: Այս մասին մեծապէս մեզ նպաստած պիտի լինին այն աշխիւ ազգայիններն, որոնք կամ արունտիւ ըստանկարիչ լինելով և կամ Բնաշխարհի նուիրական օրբավայրերու և օքանչելի անտարանաց լուսանկարներու սիրող և հաւաքիչ բարեհասին մեզ գրիկել վերստին ևտ ընդունելու պայմանս, իրենց լուսանկարներէն մի մի օրինակ և կամ անոնց ցուցակն:

Բնաշխարհիկ Բառարանի իւրաքանչիւր պրակի գինն է, ճանապարհի ծախարը միատին, զուտ 3 ֆրանք (=1,20 րուբլի = 60 սէնթ) Այն անձանց, որ կարենան մէկ անգամ մէն ատորը օրինակ գնել, մէկ օրինակ նուէր կը զրկուի:

Le Gérant J. MUNIER

Տպա. գ Գիւմ: իլիւն. — Թ. Ս. Փարիսգետնի

ԳԱՖԷ ԵՓՐԱՏ

Ապրիլի Պապ-Էլ-Պոսթալ Զրաւարակից վրայ և Նուագածուաց խմբի Զօրանցի դիմացը
ՕՋԱՆԵՍ ՍԻՄՈՆԵԱՆ
ԴԱՆԻԷԼ ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Մէկ հատիկ Զրաւարանն է Գահիրէի մէջ, ուր կենդանացէր մը կարենայ անցընել հաճոյտի ժամանց մը: Ապրիլի ընդարձակ հրատարակին զովազին օգը, վայրին սքանչելի գիրքը, և սպասներուն մաքրութիւնը, ըմպելեաց անտարատութիւնը, այս ամեն առաւելութիւններով ԵՓՐԱՏ ԶՐՈՍԱՐԱՆԸ քիչ ատենուան մէջ յաջողած է անենալ յաճախորդներու պատկառելի թիւ մը, որոնք ամեն իրիկան, ժամագրութիւն ըրած են, ու ժամերով կը վստիւնելն երջանիկ ընկերութիւն մը:

Ամեն կարգի զովարար, թարմ անխառն ըմպելիներէ զտու մասնաւոր խնամքով կը պատրաստուի ընտիր ընտիր միջոցներ օչարակ. ամենէն գրեթէ օտարահաճներն անգամ պիտի գոհ մնան նիրասէն:

ՃԱՆԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԳԱՋԱՆՃԵԱՆ
Շարա Ապու-Սապահ
Նիեու-Տեիլիւսէյ իրաւարանից դիմացը.

Օգտատն ու զուարճալի գիրք մաքուր ու վայելուչ սպաս. համեղ ու աննդարար կերակուրներու զանազանութիւնն, անխարդախ պատրաստութիւն. ճիւղ ճաշացուցակ մը գիւրամատչելի գիններով ահա՛ Գալանճեան եղբարց ճաշարանը:

Ով՛ որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող գիւմէ, վստահ պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախորդը պիտի դառնայ հայկական ճաշարանին:

ՊԱՆԳ ԼԻՍՆԷՋ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱՆ ԵԴԻՊՏՈՍԻ
Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Լիոնի հանրածանօթ գրամատուր, այս անգամ ունեցաւ իւր Եզրիպտոսի գործակալնալ, Տ. Մկրտիչ Սօսոյեան, որ իւր հրատարակային ցոյց սուած պարկեշտ գործունէութեամբ ամենուս վստահութիւնը կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի քաղաքապետութիւնէն պաշտօնապէս վստահացուած փոխանորդարի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէյի միջոցաւ ամեն տեսակ գրամական և Գաղղիական ամէն արժեթուղթերու գործուղութիւններ, դանձուներ: Ամսական չնչին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պահեստի բաժնետուղթ մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած:

Փափարդները հաճին գիմել Նիւպոսի վրայ փաստարան Ռարթաքի գրասենեակը:

Թղթակցութիւն և կամ զրամ զըրկել հետեւել հասցէին:

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ
Ի ԳԱՀԻՐԷ

ԶՈՒԻՉ-ՄԵՔԵՆԱԳՈՐԾ
ՏԻԳՐԱՆ ԵՒ ԵՂԲԱՐԻՔ
ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ ԵՒ ԵՂԲԱՐԻՔ ՏՊԱՐԱՆԸ

Կը ձուլեն, կը շինեն երկաթէ ու արդիւն զանազան գործիքներ ոսկերչութեան և ուրիշ նուրբ արհեստներու վերաբերեալ, ծախիչ, եւն., յաճախորդները գոհացնող պայմաններով:

Ա. Զ. Դ

Ազգային Գալուսեան վարժարանի համար Օգնական — Աւուսչուհի մը պէտք ըլլալով, փափարդը կրնան գիմել վարժարանս և բանակցել Տեօրիսութեան հետ:

ՏԵՕՐԻՍՈՒԹԻՒՆ
Գալուսեան երկու վարժարանի

ՊԵԼԱԵԱՆ-ԹԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.
ԱՍԵՐԻԿԵԱՆ ԳԵՐԱԿԵՐ
ԱՐԱՆՏ ԵՒ ՏԻԿԵԱՆՏ
ԵՒ ԶԵԼԻԳԻՏՈՒԹԵԱՆ ԳՊՐՈՑ
Ապրիլի մեծ պողոտայից վրայ Տայիսայի Սանիթի դիմացը, Եսթիկոն ելիցաւ սն գործիքներու վանս սուսեր:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արդոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք գոհացնել մեզ գիմել Պաս. յաճախորդները, գործի մարբութեան, գիներու չափաւորութեան և ճշգրտագոյնութեան կողմէն:

Մեր գործատեղոյն մէջ կ'աւանդուին նաև ձեռագրութեան դասեր ամերիկեան ամենալեզնի կատարելագործուած մէթոտով:

Մանրամանութեանց համար գիմել մեր գործատեղին:

ԱՍՍՄԱՐՈՅԹ
Պ. ՆԻԿՈՂԻՍՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գահիւ ար լա Պարսի կից, Բ. յարկ, թիւ 9 գատիկներ:

Կը բժշկէ բերնի և ակուպի ամեն տեսակ հիւանդութիւնները: Ազրասները ձրի կը գործանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9:

Տ Պ Ա Ր Ա Ն

Մ Է Ա Մ Է Է Է Է Է Է

Ի ԳԱՀԻՐԷ

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ԺԻՇԴ ԴԻՄԱՑ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լիզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցեատմեր, մահազեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանանազիրներ, նամակազուրկներ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն:

Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենայն իմամօֆ եւ ճաշկատու սպարոթեանը:

ԶԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ,

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐԻ»

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՒՆԻ ԲՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏԵ Է ՈՒՂՂԵՒ ԱՌ
Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Բագրի
ԳԱՀԻՐԷ

Direction du journal
NOR-OR
Caire

Ձեռագրիչներն են չեն դարձուրի
ԱՐՏՕՆԱՏԷՐ Ժ. ՄԻՆԵՆԷ

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Պ Ի Ր
ԱԶ Գ Ա Յ Ի Ն, ԲԱՆ Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն ՈՒ ՔԱՂԱՔԱ Վ Ա Ն
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԵՐԵՄԵՐԻ ԵՒ ՇՄԱՌԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ե Գ Ի Պ Ց Ո Ս	
ԳՐԵ, ՈՂՁ	
Գանձիւի համար սարեկան	50
» » վեցամսեայ	30
Շրջակայից » սարեկան	60
» » վեցամսեայ	35
ԱՐՏԱՑԱԶԻՐՈՒՄԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան	Պրանց 18
վեցամսեայ	» 10
ՌՈՒՍՅԱՑ ԵՒ ԿՈՂԿԱՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան	Բուրի 7
վեցամսեայ	» 4
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄԻ ԿԱՆՈՒԿ Է	
ԵՒ ԲՂԹԱՍԱՐԻ ՇԱՒԲԸ	
Թերին վարչութեան վրայ է	

ՇՄԱՐ ՀՈԿՏ. 28/10 ՆՈՅԵՄԲ. ԲՍԱՆ ՓԱՐԱՑ ՈՂՁ Ա. ՏԱՐԻ ԹԻ 45

Ք Ր Օ Ն Ի Կ

Բարեկամներու

«Կինանդ խօսքը մտիկ ըրէ՛, գոնէ տաւրին անգամ մը» ըսած է չեմ գիտեր ո՛ր իմաստունին մէկը:

Գլուխս ինչպէս նաև միտս ուսող բարեկամներ — ա՛ս վերջինները շատ աւելի պատկառելի են . . . Թուով — երկու տարիէ ի վեր անընդհատ կ'առիպեն զիս նորէն հրապարակ ինչիս և թղթի կտորներու վրայ նեւան զգալի արձագանքներ ու մտածումներ որոնք այդքան ատեն գանկիս ասիկա միտքուած կը մնան և որոնցմէ ո՛չ ոք օգտուած է. . . ինչմէ սկսելով:

Բարեկամներու հանկի երկնայու և աւանդ խօսքը գոնէ երկու տարին անգամ մը մտիկ ըրած ըլլալու նպատակով է որ «Նոր-Օր»-ի հաճոյակատարութիւն խնդրած եմ թող ապա ինծի իր սխնակներու մէջ գոհացնել փափաք մը որ իմն ըլլալէ աւելի ուրիշնեւրուն է:

Ահա՛ ձեզի յատկապէս մը որ Անաղձ Ֆրանսի յատկապէսներուն չի նմանիր անշուշտ, գիտեմ. անոնց մէջ տաղանդ կայ, սակայն ներքեցեք որ ըսեմ թէ իմինս մէջ ալ անկեղծութիւն մը կայ որ շատ անգամ տաղանդէ մը աւելի կ'արժէ պայմանով որ հակառակը պնդող չըլլայ:

* * *

— Սակայն ի՛նչ պիտի գրես, կը հարցնէր ինձի, բնականաբար:
Ի՛նչ պիտի գրեմ, աւասիկ հարցում մը որ բաւական կը շփոթեցնէ զիս ինչպէս կը շփոթեցնէ աղջիկ մը որուն առաջին անգամ կը հարցնես թէ կը սիրէ՞ գրել գրելով միշտ, ամեն վարպետորդի աղջիկն անգամ այդ հարցումին առջև կը կարծիք ու կը շփոթի, ոչ թէ որովհետեւ հարցումը նոր է այլ. . . հարցնողը:

Շիտակը, ես ալ աղկի մը չեմ գիտեր թէ ինչ պիտի գրեմ, սակայն, զոյ մ'իջարք, ամեն պարագայի մէջ ո՛չ աղքատանամ ներք, ո՛չ որբերը և ո՛չ ալ առաջնորդը պիտի զրազեցնեն զիս, որովհետեւ ինչմէ շատ աւելի խելացի ու ձեռնհաս մարդիկ շարունակ կը գրեն ու կը գրեն, բայց ի գո՛ւր, նորէն շնորհքով աղքատանամներու կը յաշարկն անշնորհները, որոնք կը բազմանան բայց պի՛ճեթեթով չէ որ կ'աճին, իսկ Առաջնորդը կուգայ, կուգայ, եկած չունի, մեր բաղդէն:

Իրաւ է որ գրելիքներս այս նիւթերէն

աւելի օգտակար չեն գուցէ, բայց գոնէ պիտի շահամ հանկի ընել անոնք և անշուշտ գուր ալ ինծի պէս գիտեք թէ հանկին՝ օգտակարին խորթ բոյրը չէ:

* * *

Լորտ Ռոզպրի իր համարաւոր ձիերը կը ծախէ կոր . . .

Ձէ՛, այլ ես չեմ կրնար շարունակել, պարագայ բան է, ամբողջ շիշերս ոտք կըսեմ են, գէշ կ'զգամ կոր: Որուն հոգ, կուզէ ծախել, կուզէ չ' ծախել. նոյն իսկ Աղբը-սանդղից Թաղական խորհուրդը աղկին հոգիերը ծախած ատեն ինծի բան հարցուցած չունի, ո՛ր մնաց այդ դիւանագէտ սրբորումները:

Հա՛, ինչ պիտի ըսէի. . .
Մտքիս զբաժը չլիտի կրնամ գրել, կամ ըսու անկախ պատճառով մը:

Այն պահուն որ Ռոզպրի ձիերուն վրայ կը մտածէի, մէկը՝ սենեակէս ներս կը սպըրդի և ինծի կուտայ նամակ մը զոր գուր թերևս ինչմէ առաջ կարդացած էք:

Գահիլիկի նորակազմ Աղքատանամին նամակն է այդ:

Հակառակ ուխտիս անպատճառ երկու բառ ըսելու եմ ատոր վրայ:

«Որ ողորմի աղքատին», փոխ տայ Աստուծոյ». այսպէս կ'սկսի նամակը, և կը զարմանամ թէ ինչու հետեւեալ պարբերութիւնով չի վերջանար.

«Որ ողորմի աղքատին. . . նախ Հայերէն սորվելու է»:

Աղքատները՝ ատանկ հարուստ հայերէնով մը երբեք չեն պաշտպանուած:

Ես որ կորուսեալ վայրկեաններու մէջ ինքզինքս զբաղուի տեղ գնելու յատկապէս ստույգներ ունիմ, ես՝ այդ հայերէնէն և կամ այդ նամակէն բան մը չի հասկնայէս ետքը, կը մտածեմ թէ ինչե՛ք Սեփոն ազան, խաւամ Արթուրին, խըրդի Աթանի, Տեփոնի Թաղապետ, ետզմաճի Ռուբինը, քոհաճի միտի Լեոնը և կամ անհարձի Օմիկը ինչ տպագրութիւն պիտի կրեն այդ թղթին ընթացումն յետոյ:

Իրաւ, բանաստեղծութիւնը աղբոր, գրականութիւնը սրանչելի և շարաբանութիւնը գովելի բաներ են և նոյն իսկ կը վարձատրուին Իզմիրեանցի մրցանակով. բայց նոյն իսկ աշխարհիս լուսագոյն բաները երբ իրենց տեղին չեն գործածուի կը գաղթին լաւ բան մը ըլլալէ և ծաղրելի կը դառնան յաճախ:

Ես գրու կը գնեմ թէ այդ նամակը ընդունակներուն հարիւրին ինքնուրու բան մը

չեն հասկցած և զղջացած են ժամանակին Բազրատունիի լեզուն աղկի մը սորված չըլլալուն:

Շնորհակալի ոճով այդ մարտը հայերէնը որտեղ չի՛ խօսիր, գու՛թը չի՛ շարժեր, ասպարոթութիւն մը չի թողուր վրազ. գրողը — ինչ խըրդիս հայերէն գիտէ կոր, կ'ըսես մըտքովդ և աղքատներուն վրայ խորհելու այլ ես ատեն չի մնար:

Աղքատները ո՛ր ատեն բողոք ունեցած են: Գրականորէն եթէ ընել ուզենք այդ նամակը, զարձեւը նպատատուր զազափար մը չի պիտի կրնանք կազմել, աւա՛ղ:

Հիւկոյի ոճով սկսուած այդ նամակին մէջ — խոստովանիւք — շատ գեղեցիկ զարձուածքներ կան որոնք զգայուն սիրտ մը և բարի հոգի մը միայն կարող էր արտայրել:

Բայց յանկարծ գրողը այդ ազուր բարձունքին վար կը գլորի, աչքիդ առջև կը նըսեմանայ երբ երկու գեղեցիկ պարբերութիւններու մէջտեղ կը զետեղ հետեւեալ տողը:

«Աղիքներու պարբերական շարժումը մարտողութիւնը աւելի հեշտին կ'ընէ» կը. . . Այս տողերը կարգացած միջոցիկ կարծես ներս մտնել տեղէ մը որուն վրայ W. C. գրուած է:

Ասիկայ թիչ մը անճաշակ կը գանեմ ես ինչպէս անճաշակ պիտի գանեի պարոն մը որ աղբոր աղկան մը կամ կնկան մը Շօն-սաններ, Սիլվիոն, Քրիստօֆօր, կոճերքներ կերցնելէն և մատ մըն ալ մաշակա խմցնելէն ետքը պաղարկուութեամբ մը կը հարցնէ անոր.

— Բիչ մըն ալ ըստըրմա կուզե՛ս:

* * *

Ֆիլիպին ալ զատապարտեցին, Հէ՛:

Ո՛վ գրամ, բու անուճող ինչ անիրաւութիւններ կը գործուին կոր նոյն իսկ Արդարութեան պալատներու մէջ:

Մարդ ո՛չ փաստաբան, ո՛չ իրաւագետ, ո՛չ լիստոսիկ և ո՛չ ալ զատուոր ըլլալու պէտք ունի այդքան վրան բաց անիրաւութիւն մը չ'ըմբռնելու համար:

Ինչպէս, ահա՛ ձեզի մարդ մը որ 150 հազար անգլիական օսիկ խրայուցած է և միայն երկու տարի բանտարկութեան կը զատապարտուի, մինչդեռ անցեալ շաբաթ Պերպլերի մը իր տիրոջը ժամացոյցը անուշաբուրեղութեամբ թոցուցած ըլլալուն համար երեք տարուան տուժանակիք աշխատութեան վճիռը կուտար:

Ինչ տեսակ օրէնք, ինչ տեսակ արդարութիւն է այս:

Աւելի լաւ չէ՛ր ըլլար եթէ արդի դատարանները խոշոր գրեթով ազգ մը փակցնէին

իրենց դրան վրայ հետեւեալ տողերը պարունակող.

«ՆՈՐ ՕՐԷՆԻՔ»

«Դամացոյց, զրամապանակ, հաց և ասոնց պէս պղտիկ բաներ զողոզնիքը շարաչար կըր ով պիտի պատժուին, բայց ամեն անոնք որ անանուն ընկերութիւններ կազմելով կրնան հարիւր, երկու հարիւր հազար և կամ մէկ միլիոն օսիկ շորթիլ հասարակութեան, ասոնք պիտի արտանան Մօնթիեօնի մրցանակին»:

Ինչ, 20րդ. դարը կը կարծէր թէ ասանկ յաւրպիցներ չէ վերապահած մեզի:

* * *

Օրէնք, օրէնք բազաբիս հայրանամ կատարելի դրած օրէնք է՛ Ձէք իմացած, իրաւ, ըսել է թէ խաւար չունիք աշխարհէն կամ կես-աշխարհէն ինչ որ աւելի ճիշդ պիտի ըլլար:

Այսուհետև մեր պատուական յառուիչները անխնայ կերպով, աչքերին գոց և ամենայն համարձակութեամբ պիտի ձերբակալեն ոչ թէ ապագայ ֆիլիպինները, այլ ամեն այն կիները որոնք իրենց յայրատ բալտածրով, զգլխիչ շարժումներով և կամ անպատշաճ խօսակցութեամբ պիտի վերգովեն հանրային բարոյականը:

Բունի գործադու մըն է այս որու կենթարկու ին մարդկութեան այն կէտը որ միւս կէտին շնորհիւ կ'ապրել:

Ամեն արհեստ կը դժուարանայ կոր նոյն իսկ ամենէն հեշտ կարծուածները. . .

Խեղճ, անկեալ կակներ. ձեր հացին ալ աչք կը անկեն կոր. մե՛զը:

Փողոցը այլևս ձեզի համար չէ. պատուաւոր կիները պիտի մնան հոն: Պղտիկ զողութիւնները և համարձակ կիտաշխարհկութիւնը արգիլուած է մաշիցի այս երկրին մէջ:

Միայն մէկ միջոց մը կը մնայ ձեզի այս օրէնքին ձեզ տուած հարուածէս պրծելու համար:

Դուր նորէն փողոց կըք առաջուան պէս. շատ շատ յառուիչը պիտի բռնէ զձեզ, աւելի լաւ, զո՛րք ալ ան բռնեցէք:

Չառուիցներ ալ մարդ են վերջապէս:

* * *

Տեսէք, սիրելի ընթերցողներ և զուր նազելի ընթերցողներ, բրօնիկազրիններ որքան շատախօս կ'ըլլան:

Սկսած ատենս չէի գիտեր ինչ գրելիքս և յանկարծ կը տեսնեմ թէ յօդուածս բանի մը սխալակ տեղ պիտի գրուէ ի մեծ բարկացումն պարոն զրաչարներուն և զուրք ալ